

ողորմութիւն՝ սէր և թողութիւն թերեւ լինի ազատութիւն և թեթևութիւն՝ ինչ այնքան պարտուցն։ Այլ և զայս (պ)ատուիրելով պատուիրեմ ձեզ սիրելեացդ իմոց. զի յորժամ տաք և նուիրէք զձեր տուրք և ողորմութիւն՝ զամենն ի գիր և տէֆտէրս առջիք ամենեքեանդ թէ շատ և թէ սակաւ թէ որքան և իցէ մինչև զկէս ըսուպն և ի մի ըստակն զամենն տէֆտէր արարէք թէ քաղաք և թէ գիւղ, և թէ այլ ինչ տեղիք որ լինի զի իւրաքանչիւր (ս)եղևոյ տէֆտէր արասցէ երեգ մինն առ մեզ առաքեցէք մինն ընդ ձեզ պահեցէք, և միւսն տացէք յայնմ որ զողորմութիւն ժողովէ. և ամեն ոք որ ողորմութիւն շնորհեն ըստ չափոյ իւրնց գրեսցեն և զանուն իւրնց. և ծնողացն և զտեղոյն և զքաղաքին. որով կոնդակաւ դրոշմեալ արձանասցի մնալով յճշտի յճշտն ի մէջ այն բն. սէր տանն որ հնազանդ ի մէջ պտուղի և ի մէջ պաշտման յճշտի. որ մասն և բաժին լինի կենդանեաց և հանգուցելոց. և զձեզ առ հասարակ ամենեքեանդ արժանաւորս արասցէ երանաւէտ ձայնին որ ասէ եկաք ահա հեալք հօր իմոյ ժառանգեցէք զանրսպառ ուրախութիւն որ է ահա հեալ յճշտն ամենն։ Գրեցաւ ահա թե ինչն ամենն իմին Ռժժ և վեց, մարտի ամսոյ, իւր ի մայրաքաղաքն կոստանդնուպօլիս, ընդ հովանեաւ սէր լուսաւորիչ եկեղեցւոյ»։

Ա. Յովհաննէսեան.



Արմաւիրի չեքեզախօս հայերի անցեալի մասին — հայրենիք եւ զաղթը։

Ա.

Արմաւիրի չեքեզախօս հայերի մասին ռուսաց արխիւներէ և պարբերականներէ մէջ տպուած տեղեկութիւնները ժ.թ. զարից են, իսկ աւելի հին շրջանից համարեա ոչինչ յայտնի չէ։ Այն հարցը, թէ ինչպէս են նրանք լեռներն ընկել կամ նախ քան իրենց Արմաւիրում վերաբնակուելը ո՞ր էին նրանք բնակուած, մնում է անլուծելի. «Այս առաւել, այն քեօյի մէջ էին ցրուած, տուն-տուն բաժանուած չեքեզներէ, բալկարներէ, ուրուսերէցոց մէջ», այսպէս է աւանդութիւնը այդ մութ շրջանի մասին։ Եւ վաղուց մոռացուած է այն, ինչ որ Հակոտհառաքէնը յիշում է լեռնաբնակ հայերի՝ իբրեւ խմբուած մի հաստատաբնակ մասսայի մասին, թէ Պիցուդայից դէպի հիւսիս լեռներէ մէջ գտնուած է մի հայոց եկեղեցի և վանք, ուր ափիսազներն էլ են ուխտ կատարում. վանքը գրադարան ևս ունէր 1840 աւան թուերին (Закавказскій Край, 1858, Москва, I. 5)։

Եւս առաւել մութ է հայերի լեռներում ունեցած զրադմունքի հարցը. այդ մասին այն կարծիքն է իշխում, թէ՛ ճինովական գաղթավայրերի նման, հայերն էլ զրադուած էին վաճառականութեամբ: Բայց հազիւ թէ այդ ճշմարիտ լինի իրական անբողջութեամբ: Եթէ ենթադրենք, որ ներկայիս Արմաւիրի բնիկների մի երրորդ մասը, գոնէ, կար 1830 ական թուերին, երբ նրանք վերաբնակուեցին Արմաւիրում,—ապա զժուար է ընդունել, թէ աղքատ և աւաղակարարոյ լեռներում այնքան շատ վաճառականական մնայուն շուկաներ են եղել, որ գրաւել են հազարաւոր վաճառական հայերին մշտական բնակութիւն հաստատելու այնտեղ: Յայտնի է, որ լեռներում ապրանքների շարժումը անհաստատ բնոյթ է կրել, շուկայ չի եղել լեռների ներսում, բացառութեամբ ծովափնեայ քաղաքների, ուր թերեւ շտեմարաններ կային. գոնէ ոչ պատմութիւնը և ոչ էլ ժողովրդական երգերն ու աւանդութիւնները յիշում են լեռների ներսում մնայուն խանութների գոյութիւնը: Միւս կողմից յայտնի է, որ Արմաւիրի ազգաբնակչութեան կէսից աւելին իր աւանի հաստատութիւնից սկսած մինչև անցեալ տարի ինստունական թուերը երկրագործութեամբ էր պարապում, և մինչև այսօր էլ նոյնը շարունակում է, բայց հետզհետէ նուազելով երկրագործների թիւը և աճելով սոսկ հողատիրական տրամադրութիւնը:

Այսպէս ահա անորոշ և մութ են Արմաւիրի բնիկների անցեալի մասին ծանօթութիւնները: Մի 50 տարի առաջ նման պայմաններում էին գտնուում բոլոր լեռնական ցիղերը և սակայն այսօր այնքան հարուստ գրականութիւն կայ նրանց անցեալի մասին, որ արմաւիրցիները նախանձել կարող են նրանց: Շնորհիւ այդ հարուստ գրականութեան պարզուել են լեռնցոց կենցաղական իրաւագիտական և կրօնական կեանքի բոլոր կողմերը, գտնուած են շատ գաղութների փոխադարձ ազդեցութեան հետքերը, բացատրուած է Իսլամի կատարած դերը և այլն: Իսկ Արմաւիրի բնիկների ազգագրական նիւթերից ոչինչ տպուած չէ և յայտնի էլ չէ, թէ կան արդեօք այդպիսի նիւթեր որեւէ տեղ ժողովուած, թէ՛ ոչ: Այդ տեսնելով ահա, մենք մեր ունեցած սուղ տեղեկութիւնները հրապարակ ենք բերում մեր եզրակացութիւններով միասին. եթէ ապագայում աւելի հարուստ տեղեկութիւնները հակառակ եզրակացութիւններ կը տան, այն ժամանակ մենք կը մխիթարուենք դէթ այն մտքով, որ առիթ տուինք նրանց հարստութեան և ստուգութեան հարցերին:

Բ.

Արմաւիրը բաղկացած է չորս ազգագրական թաղամասերից, որոնց անունները աւանդական են միայն և պաշտօնական յարաբերութեան մէջ անգործածական: Դոքա են.

- | | |
|-----------|------------------|
| 1. Հաքուճ | Հարլ (կամ Հաքու) |
| 2. Հատու | Ղուայ |
| 3. Եջեր | Ղուայ |
| 4. Ջաուր | Հարլ |

Արաձեխների լեզուով հարլ նշանակում է համայնք, իսկ Ղուայ նշանակում է աւան: Առաջին և չորրորդ անունները մեկնւում են իբրեւ Յակովբի և գեաւուրի համայնքներ, իսկ երկրորդ և երրորդ անունները համարւում են այն լեռնական գիւղերի անունները, ուր բնակուելիս են եղել այդ թաղերի բնակիչները նախ քան Արմաւիրում վերաբնակուելը: Աւանդութիւնն ասում է, որ ոչ մի թաղամաս որեւէ լեռնական համայնքի ամբողջութեամբ չի լցուել, այլ թաղամասերը կազմուել են՝ զանազան առւններից դուրս եկած քրիստոնեաներով: Ուստի և՛ հայերի լեռնական կեանքը ուրոյն ցեղական համայնական բնաւորութիւն չի կրել. նրանք ցրուած լինելով լեռնականների ցեղական համայնքների մէջ՝ կազմելիս են եղել այդ համայնքների մէջ իբր նրանց մի օտար և աննշան տարրը:

Բացի թաղերից որոշւում են նաև թաղերի ազգաբնակութիւնները՝ իրենց բնաւորութեամբ. քաջ, ձեռներէց է թէ՛ Հաքուճ Հաբլցին և թէ՛ Եջեր Ղուայցին. նրանք սիրահար են նաև հերոսական երգերի և վէպերի: Իսկ մասնաւորապէս Եջեր Ղուայն աչքի է ընկնում իր ուրախ և զուարճասէր բնաւորութեամբ: Ընդհակառակն՝ Հատու Ղուայցին վախկոտ է և թուլամորթ: Մասնաւորելով համեմատութեան առարկան, հանդիպում ենք տոհմերի առանձնայատկութեան. Կիրիակեան և Ակսենտեան տոհմերը յայտնի են իրենց հերոսական յարձակողական և նոյնիսկ աւազակաբարոյ տրամադրութեամբ, իսկ Կումշայեան տոհմը՝ զուարճասիրութեամբ և նոյնիսկ թուլութեամբ դէպի ոգելից խմիչքները: Դժուար է վճռել այն հարցը, թէ ինչ պայմանների հետեանք են այդ բնորոշումները. արդեօք լեռնական ցեղերի հետ ունեցած արիւնակցական կապերի, ուրեմն ստացական պայմանի, թէ իրենց ցեղական բնատուր ձիրքերի: Ամենից հաւանական է ենթադրել, որ այդ խնդրում դեր են խաղացել մէկից աւելի պայմաններ, բնատուր ձիրքն ազդել է ստացական ունակութեան վրայ և ընդհակառակն, մինչև որ ստացուել է մի խառն և

Թարմ նոր սերունդ: Նոյնիսկ գոյութիւն ունի հաւանականութիւնից ոչ-շատ հեռու մի աւանդութիւն այն մասին, թէ Արմաւիրում վերաբնակեցնելու ժամանակ եկել և իբրև ցեղակից՝ հայ անուան տակ յարել են քրիստոնեայ ընտանիքներին մի քանի բնիկ լեռնական ընտանիքներ, թերևս մի հին ընտանեկան սրբութիւն դարձած բանաւոր աւանդութիւն իր անցեալի մասին ունեցել է այդպիսի «բնիկ լեռնական» ճանաչող ընտանիքը, թերևս՝ ոչ, այլ գաղթել է նա Արմաւիր որևէ ցեղակցական թշնամութեան և վրէժխնդրութեան սովորութիւնից խուսափելու համար: Էականը այն հնարաւորութիւնն է, որով արիւնախառնութեան շնորհիւ տոհմերի և թաղերի ամբողջութեան համեմատութիւնը հակասութիւն է տալիս: Օր. մի կողմից Հաքում Հաբլի բնակիչները իրենց նախնեաց հերոսական գործերը մոնոտոն երգերով դեռ ևս աւանդում են սերնդէ սերունդ, և իրենք էլ քաջ և ձեռներէց մարդիկ են, և միւս կողմից նոյն այդ Հաքում Հաբլիները մի քանի ծաղրական դարձածներով են թարկւում են այսօր միւս թաղամասերի կողմից հեզութեան և անարգանքի, իբրև թուլամորթ և մեղկ բնաւորութիւն ունեցող երկրագործ ժողովուրդ:

Ահա այդ դարձուածներից մի քանիսը:

1. Պսուճը ծում շըլո ութէս (եղի վրայ նստած ես շրջում):
2. Դէղա չէր մասուում փալհ (գնա աթարը կրակը գցիր):
3. Հանդ խուպսըմ ղէու (բրնձաջրի ապուրին զօռ տուր):

Ինչպէս նկատելի է, այս ծաղրական դարձուածները երկրագործ և նստակեաց ժողովրդի ներկայութիւնն են մատնում, և մի քաջ ու ձեռներէց հասարակութեան յարմար չեն այդ մեղկ և դաշտային բնակիչներին յարմարուող ակնարկները: Մեզ համար այս հակասական ցուցումները իբրև որոշ պատճառներից առաջացած հետևանքներ, այնքան նշանակութիւն ունին, որքան նրանցով իբրև հետևանքով մեկնում են պատճառները. բարեբախտաբար՝ Հաքում Հաբլիներին ուղղուող դարձուածները ուղղակի մտքով ծառայում են պատճառների մեկնութեան, և իբրև այդպիսին՝ նրանք բացառութիւն են կազմում ազգագրական միւս ցուցումների շարքից, որոնք մեզ յայտնի են: Հետեւալ գլխի մէջ մենք այդ դարձուածների մեկնութիւնը կառաջարկենք

Գ.

Արմաւիրի բնիկ հայերի ազգագրական նիւթերը հասկանալու համար անհրաժեշտ է շատ լաւ ծանօթ լինել կարաբաղայի և առհասարակ Էլբրուսից հիւսիս և արևելք բնակուող լեռնական ցեղերի նման նիւթերի հետ: Դարեր շարունակ ապրելով այդ ցեղերի մէջ,

հայերը զոհել են իրանց մայրենի լեզուն, ցեղական կենցաղը, հագուստը, սովորութիւնները և այն բոլորը, ինչ որ հայկական է, և փոխարէնը ընդունել են շրջապատող կիսամայրենի ցեղերի կեանքի արտայայտութիւնները: Կատարեալ հրաշք պէտք է համարել, որ հազիւ այդ մի բռնն հայերը կարողացել են փրկել «Լուսաւորչի խաչն ու հաւատը» միայն Իսլամի այն հեղեղից, որին ժԸ-րդ դարում զոհ գնացին լեռնաբնակ բազմաթիւ քրիստոնեայ, հեթանոս և մովսիսական համայնքներ: Ուստի պարտաւորուած՝ Արմաւիրի ազգագրական տեղեկութիւնները հասկանալու համար անհրաժեշտ է նոցա համեմատութիւնը Կարաբաղի և միւս լեռնաբնակ ցեղերի հերոսական, տնտեսական և տեղագրական պայմանների հետ կատարել՝ նիւթին վերաբերող ուսումնասիրութիւնների ընթացքով:

Ձերքեզների հողագործ դասակարգը կոչոււմ էր օղ, իսկ կալուածատիրոջ դաշտային և ընտանեկան գործերը կատարողը՝ догунапуть. օղ և догунапуть ստրուկ էին և կազմուած էին պատերազմական գերիներից (Масловский, Привилегиров. сословія кабард. „Окр.“, Сбор. Св. о Кавк. горцахъ, вып. III. стр. 1, 9.): Հողագործութեան իրրե անարգ պարապմունքի պատմութիւնը հին է, Հերոդոտի խօսքերով՝ հին Թրակացոց կարծիքով ամենաբարձր ճոխութիւնը պարապ նստելն էր, իսկ հողի մշակութիւնը՝ ամօթալի գրազմունք էր համարուում: Ամենագեղեցիկ կենցաղը զինւորութիւնն էր և աւազակաբարոյ կեանքը (Ե. 6): Մեր ժամանակուայ համար տարօրինակ այս հասկացողութիւնը նոյնիսկ կրօնական սրբագործութիւն էր ստացիլ շատ տեղ. Եակուտները յանցանք էին համարում երկիրը քանդել ու փոքելը, ինչպէս և Մոնղոլները, Թալիշները և Իրօկէզները (Изв. Вост. Сиб. О. И. Р. Г. О. XVI, №1-3 стр. 85, 86; ib., XVII №1-2, стр. 127. Зап. К. О. И. Р. Г. О., III. 6. և այլն): Ձեչհնների Կիստին տոհմը, չերքեզների նման, հողագործութիւնը համարում է տղամարդի համար ամօթաբեր և սոոր գրազմունք (мастер. для изуч. Экон. быта госуд. крест. Закавказ. Кр., V. стр. 331): Սակայն քաղաքակրթութեան բարձր շրջաններում փոխուում է այդպիսի հասկացողութիւնը և հողը ոչ միայն համարուում է մայր և ծնող, այլև պաշտամունքի առարկայ է դառնում. այդ ժամանակ էլ տոհմերը յաճախ բաժանուում են իրարից. պահպանողականները շարունակուում են իրանց նախնին աւազակաբարոյ կեանքը, իսկ յառաջադիմականները, որոնք մեծամասնութիւն են կազմում ցեղի մէջ, փայլալիւով շէրջուած հասկացողութիւնը՝ նուիրում են երկրի բարգաւաճութեան, և այսպիսով ստեղծում են տիրող և հպատակ դասակարգերը: Նոյնը կատարուել է նաև Կովկասի լեռներում, ուր՝ Մ. Կովալիսկու և

ուրիշների ասելով, մինչև վերջերս էլ հողի մշակութիւնը և դաշտային աշխատանքը ստոր և անարգ զբաղմունք էին համարուում. ձին, գէնքը, արչաւանքը—սորա էին աղնիւ լեռնականի պարծանքը, իսկ հողն ու մշակութիւնը նրա համար были совершенно неприличны. ուստի և ստեղծուել էր մեծ մասամբ գերիներից և գնուած մարդկանցից ստրուկ դասակարգը՝ հողի մշակութեան համար։ Դրա հետ կապուած անա հայերէն հող-огъ բառի լեռներում քաղաքացիութիւն ստանալը, արհամարուած զբաղմունքն ու զբաղւողը կոչուեցին արհամարուած ցեղի արհամարուած լեզուով էլ։ Սա նոյն երևոյթն է, ինչ որ Ռուսական Իրաւագրքի մէջ вервь ոչ-ռուսական տերմինի մասին նկատուած է. вервь, իբրև օրէնսդրական գաղափար, տեղ գտաւ օտար երկրում, չը նայած, որ նրան համապատասխանող բառն ունէին ռուսները, որովհետև նա օրէնսդրական կուլտուրայից թելագրուեց մուրացողին М. М. Ковалевский. Родовой бытъ I. 83. 4)։ Անալօգիաների մէջ այն է տարբերը միայն, որ մինչդեռ вервь քաղաքացիութիւն չստացաւ ռուսաց մէջ և մնաց իբրև մեռած տառ, ընդհակառակն՝ огъ դասակարգն ապրեց չեքեքների մէջ՝ իբրև նրանց և աշխատանքը կատարող ոյժ, իբրև караиши։ Իշխանի (пши) և հողագործի (огъ) յիշեալ յարաբերութեան նմուշն են անա Հաքուն Հաբլցիներին ուղղուող դարձուածները իբրև արհամարհանք։ Չեքեքների մէջ հերոսութեան առարկաները ձին ու գէնքն էին, ստրուկ դասը ձի ունենալու իրաւունք չունէր. ընդհակառակն եղը հողագործի քրտինքի և դառն աշխատանքի ծաղրն էր, աթարը՝ անասնապահի, իսկ բրնձաջրի ապուրը՝ որսից զուրկ և քարքարոտ լեռների նուազական արդիւնքին նայող աղքատ մշակի։ Մի հարուստ վաճառական, իհարկէ, չէր լսի Հաքուն հաբլցոց ուղղուող դարձուածները, ինչպէս և մի քաջ և զուտարիւն Բաղիւլագ, ալդար և պլի, բայց այդ դարձուածները չէր լսի նոյն Հաքուն Հաբլցին, եթէ նա ապրելիս լինէր իր ցեղակիցների մէջ, որովհետև հայերը երկրագործութեան մասին ծաղրական դարձուածներ չունեն։ հողի մշակութիւնը և նրա գործիքները, ինքը հողը և նրա արդիւնքը—բրինձը—հայ գիւղացին սրբութիւն է համարում, բարաքեաթ և ուղ է անուանում։


Այդ պայմաններից անա հետևում է միանգամից երեք և զրականութիւն։

1. Հաքուն հաբլցիները լեռներում զբաղուել են երկրագործութեամբ։
2. Նրանք ծաղրական դարձուածների արժանացել են լեռներում իրենց զբաղմունքի շնորհիւ։
3. Լեռներն են գաղթել երկրագործ Հաքուն հաբլցիները կամ բռնի գերութեան մէջ և կամ ինքնաբերաբար զոհողութեամբ և

կամաւորապէս զրկողութեան ենթարկելով իրենք իրենց, քանի որ լեռների անբերրի և ցուրտ բարձունքներում հողի մշակութիւնը խիստ սուղ հատուցանելով հողագործին, ոչ ոք պիտի համաձայնէր լեռները բարձրանալ նրանով զրադուելու, իր ետեւում թողնելով Շիրակն ու Արարատեան դաշտը: Մեր յետագայ տեղեկութիւնները Հաքուճ հաբլցոց մասին հաստատում են կամաւոր գաղթի միտքը. դոքա ևն Սիւնիքի ազատագէր ժողովրդի մի բեկորը, որ ինքնակամ կերպով թողել է իր հայրենիքը և լեռները քաշուել, տարածելով այնտեղ իր խաղաղ երկրագործական զբաղմունքը:

ԳՐ ՏԵՐ ՊՈԼՍԵԱՆ

Շարունակելի



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Գրիգոր Եղբայակի մի նամակը Յովհաննէս Կոլոսին. — Վերհագրի մէջ յիշուած երկու անձնաւորութիւնն էլ ԺԸ. դարու առաջին քառորդի նշանաւորագոյն դէմքերն են արեւմտեան Հայոց մէջ: Թէպէտ նոքա ծագումով արեւելից են, կրթուած Վարդան Բաղիշեցու ձեռքի տակ, պաշտօնավարած Մշոյ Ս. Կարապետի վանքում, ծանօթ բնիկ երկրի հայ ժողովրդի կրօնական և եկեղեցական պահանջներին, բայց նրանց գործունէութիւնը բնորոշ գոյն ու կերպարանք է ստացել արեւմուտքում, մէկն իբրեւ Կ. Պօլսոյ և միւսը Երուսաղէմի պատրիարք: Յովհաննէս Կոլոսը յանձին Տ. Բաբգէն վարդապետ (այժմ եպիսկոպոս) Կիւլէսէրեանի ունի իւր կենսագրողը*, բայց Գրիգոր շղթայակիրը իւր գործունէութեան լրութեամբ դեռ ևս անյայտ է կամ քիչ յայտնի հայ բանասիրութեան. մինչդեռ Երուսաղէմի աթոռի բարեկարգութեան պատմութեան մէջ նա այնպիսի մեծ դեր է կատարել, որ արժանի է յատուկ ուշադրութեան: Աւանդութիւնը աւելի վառ յիշողութիւններ է թողել Երուսաղէմի միաբանութեան մէջ, քան բանասիրութիւնը: Գրիգոր Պարոնտէր և Գրիգոր Շղթայակիր Երուսաղէմի աթոռի պատմութեան ամենայայտնի դէմքերն են: Շրջաթայակիրն է մասամբ հաւաքել և կարգաւորել Երուսաղէմի մատենադարանն ու թանգարանը, կալուածական խնդիրները, միաբանական կեանքը, վանքն ազատել ծանր պարտքերից և ընչաքաղց ու յափշտակող մարդկանց ձեռքից, տաճարը զարդարել անօթնեւրով և բազմաթիւ նկարներով, որոնցից շատերը գեղարուեստա-

* Կոլոս Յովհաննէս Պատրիարք Վիեննա. 1904: